ԳԵՎՈՐԳ ՍՐԱՊԻՈՆԻ ՍՏԵՓԱՆՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

ԵՓՐԵՄ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԲՌՆԱԿՈԹՈՒՄ

Բազմադարյան պատմություն ունեցող Սյունիքի Բռնակոթ գյուղի տարեգրությունում հիշարժան է 1821 թվականը, քանզի նույն տարվա նոյեմբերին Նախիջևանի խանությունով Արցախ՝ Շուշի ուղևորվելու ճանապարհին գյուղ է այցելել Եփրեմ Քորագեղցի Ամենայն Հայոց Կաթողիկոսը /կթղ.՝ 1809-1831 թթ./:

Եփրեմ Կաթողիկոսի այցը, որն ավելի շատ պայմանավորված էր քաղաքական դրդապատճառներով, հետաքրքրական մի դիպվածով է հիշատակվում Սյունիքի և, մասնավորապես, Բռնակոթ գյուղի պատմությունում:

Ռուս-պարսկական առաջին /1804-1813 թթ./ պատերազմից հետո, երբ Հայաստանի հյուսիսային գավառները, ինչպես նաև Սյունիքն ու Ղարաբաղը Գյուլիստանի պայմանագրով պարսկական տիրապետությունից անցան ռուսական տիրապետության տակ, Հայաստանը փաստորեն հայտնվեց երեք տերությունների՝ Թուրքիայի, Պարսկաստանի և Ռուսաստանի կազմում: Պարսկական կառավարությունը Անդրկովկասի նկատմամբ շարունակելով իր նվաճողական քաղաքականությունը՝ հարմար առիթ էր սպասում՝ չեղյալ հայտարարելու Գյուլիստանի հաշտության պայմանագիրը և վերսկսելու պատերազմը Ռուսաստանի դեմ: Վերջինս ևս իր հերթին նպատակ ուներ տեր դառնալու ամբողջ Անդրկովկասին:

Ռուս-պարսկական հարաբերությունների սրմանը զուգընթաց, պարսկական կառավարող շրջաններն իրենց ենթակա Երևանի, Նախիջևանի խանություններում և Օրդուբադի գավառում էլ ավելի սաստկացրին հայահալած քաղաքականությունը: Նախանձելի չէր նաև Էջմիածնի վանքի վիճակը: Երևանի վերջին սարդար Հուսեյնխան Ղաջարը /1807-1827 թթ./, վանքի վրա ծանր պարտքեր դնելով, սկսեց քայքայել վանական տնտեսությունը: Հավատացյալ հայերը որքան էլ նվիրատվություններ էին անում վանքին, այդուհանդերձ պարտքերի բեռը թեթևանալու փոխարեն, ավելի ու ավելի էր ծանրանում: Միաժամանակ, Երևանի սարդարի կողմից հոգևորականների նկատմամբ սկսեցին իրականացվել բռնություններ և կամայականություններ: Վիճակը բարդանում էր նաև նրանով, որ վանքում այդ տարիներին ռուսական և պարսկական կողմնորոշում ունեցող բարձրաստիճան հոգևորականների միջև սկսեց ծավալվել քաղաքական ակտիվ պայքար, որի հետևանքով Եկեղեցու ներսում արհեստականորեն ստեղծվեցին պարսկամետների և ռուսամետների հակադիր խմբավորումներ:

Առաջինին հարող հոգևորականներին գլխավորում էր վանքի լուսարարապետ Հովհաննես Կարբեցին, իսկ երկրորդին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս

Եփրեմ Քորագեղցին[1]: Ռուսամետ հոգևորականների գործունեությունը, անշուշտ, ավելի առաջադիմական էր և մոտ հայ ժողովրդի ազգային ձգտումներին:

Էջմիածնի կաթողիկոսության միասնականությանը սպառնացող այս շրջանում Եփրեմ Կաթողիկոսը, քաջություն և համարձակություն ցուցաբերելով, իր կորովի գործունեությամբ փորձեց պահպանել ոչ միայն մեր ժողովրդի հոգևոր աշխարհիկ միասնականությունը, այլև Ամենայն Հայոց Կաթողիկոսի իրավասությունը քաղաքական տարբեր պայմաններում հայտնված եկեղեցական թեմերի նկատմամբ:

Սակայն խանական բռնությունների սաստկացման պայմաններում Եփրեմ Կաթողիկոսը, խուսափելով հալածանքներից, անհպատակահարմար գտավ իր հետագա մնալը Էջմիածնում և որոշեց մեկնել Արցախ՝ Շուշի:

1821 թ. նոյեմբերի 2-ին ավելի քան երկու տասնյակ հոգևորականներից բաղկացած կաթողիկոսական շքախումբը դուրս եկավ Էջմիածնից[2]:

Էջմիածնից Եփրեմ Կաթողիկոսի հեռանալուց հետո, վանքը սկսեց կառավարել պարսկամետ Եփրեմ արքեպիսկոպոս Մարզվանցին[3]: Եփրեմ Կաթողիկոսի՝ Արցախ ուղևորության մասին իր ուղեգրություններում հիշատակում է գրող, բանահավաք, մանկավարժ և հրապարակախոս Մեսրոպ Թաղիադյանը, որը, ազգագրական նյութեր հավաքելու նպատակով Այուսիքում 1821 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին շրջագայելուց հետո, անցնում է Նախիջևան, ուր և դիմավորում է Կաթողիկոսին, ապա, Շուշի մեկնելու մտադրությամբ, միանում շքախմբին[4]:

Կաթողիկոսն իր շքախմբով ուղևորության ընթացքում, Էջմիածնից սկսած, հանդիպումներ էր ունենում ճանապարհի վրա գտվող գյուղերի հայության հետ և նրանց տալիս հայրապետական իր օրհնությունը: Նոյեմբերի 8-ին շքախումբն արդեն Նախիջևանում էր, ուր նրանց հայ բնակչությունն ու Նախիջևանի խանը արժանացրին պատվավոր ընդունելության. «Ընդ յառաջ ելին նմա, ոչ միայն ժողովորդք Հայոց, այլ և խանն Նախիչուանայ ամենայն կազմութեամբ այրուձիոյ և ազատագունդ հեծելոյ»[5]: Թեև Կաթողիկոսն Արցախ ուղևորվելու համար Երևանի սարդարի կողմից ստացել էր թույլտվություն, սակայն Նախիջևանի Ճահուկ գավառում Էջմիածնից լուր է ստանում այն մասին, որ Երևանի խանը արգելել է նրան անցնելու ռուսական սահմանը և պահանջել է վերադառնալ Էջմիածին: Լսելով այդ լուրը՝ ծերունազարդ Կաթողիկոսը վճռում է՝ որքան կարելի է շուտ անցնել Ճահուկից Սիսիանի գավառ տանող լեռնանցքը, որով շքախումբը կազատվեր խանի կողմից

---

1 Հակոբյան Պ., Խաչատուր Աբովյան, կյանքը, գործերը և ժամանակը /1809-1836/, Երևան, 1967, էջ 215:

2 Ծաղիկաթունեանց Յովհ., Ստորագրութիւն կաթուղիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հ. I, Էջմիածին, 1842, էջ 235, նաև՝ Մսերեանց Մ., Պատմութիւն կաթողիկոսաց Էջմիածնի ի Սիմէոնէ մինչև զՅովհաննէս Ը, Մոսկվա, 1876, էջ 84:

3 Հակոբյան Պ., նշվ. աշխ., էջ 295:

4 Թաղիադեանց Մ., Ճանապարհորդութիւն ի Հայս, հ. 1, Կալկաթա, 1847, էջ 274-275:

5 Թաղիադեանց Մ., նշվ. աշխ., էջ 275:

ուղարկված հեծելազորի հետապնդումներից: Լեռանցքն անցնելիս, անսպասելի տեղացած առատ ձյան պատճառով, շքախումբը չկարողացավ շարունակել դժվարանցանելի դարձած ճանապարհը, և քանի որ մոտակա Բռնակոթ գյուղը դեռ հեռվում էր, ուստի որոշեցին գիշերել մոտակա քարայրում: Միաժամանակ, օգնության ակնկալիքով շքախմբի անդամներից մեկը Կաթողիկոսի հրահանգով ուղարկվեց Բռնակոթ՝ կարպետներ բերելու և դրանք շքախմբի ընթացքին ձյան վրա փռելու, ինչը կհեշտացներ ճանապարհը. «Այլ ևս յառաջել ո՛չ կարելով, ագաւ զայն գիշեր ի քարայրի ուրեք՝ յաջակողմեան եզր գետոյն, ուր յետ գիշերային պաշտամանցն, պատուէր ետ իւրոցն զայր մի հետիոտս առաքել ի Բռնակոթ, զի հանցեն ի վաղուի կապերտս և սփռեսցեն զերեսօք զձեանն, ընդ որ հնար իցէ անցանել կարաւանին սրբութեան»[6]:

Դեռ չէր լուսացել, երբ Բռնակոթի տղամարդիկ, լսելով Կաթողիկոսի գալուստը, ըստ երևույթին Մելիք-Թանգի երկրորդի ղեկավարությամբ հավաքեցին գյուղում եղած կարպետները և շտապեցին օգնության: Տեղ հասնելով՝ նրանք կարպետները երկու շարքով փռեցին սառած ձյան վրա՝ մեկը հեծելազորի, մյուսը՝ բեռնակիր անասունների համար, և սաստիկ ցրտի պայմաններում մեծ ոգևորությամբ կարպետները արագորեն հետևից առաջ տեղափոխելով, անցանելի դարձրին ճանապարհը: Մ. Թաղիադյանցի վկայությամբ, «Նախքան զոյս առաւօտուն՝ ծագեցան առ մեզ գթութիւնք Բռնակոթայ. զեղաւ անդանօր ամենայն արու, այլ թե ո՞րպիսի կամակար ջերմեռանդութեամբ այր զարամբ եղ համբուրել զաջ Հայրապետի իւրոյ, և շնորհաց օրհնութեանն լինել արժանի՝ անմարթ է ինձ ստորագրել զուցումեալ մատամբք...»[7]: Բռնակոթցիները շքախմբին ուղեկցեցին մինչև գյուղի սահմանները: Հասնելով Սիսիան՝ Կաթողիկոսը եղավ Տաթևում, որտեղից և անցավ Արցախ:

Բռնակոթի պատմության փունջ կազմող հիշարժան այս դրվագը բուրում է խնկահոտով, իսկ նմանօրինակ արարքը խոսում է այուենեցիների՝ հնուց ի վեր քրիստոնեական հավատքի և հոգևոր այրերի հանդեպ ունեցած ջերմեռանդ սիրո ու անհուն նվիրումի մասին:

Մեզ հայտնի տվյալներով, Այուենյաց աշխարհ Հայոց 131 Կաթողիկոսներից տարբեր առիթներով այցելել են նաև Մուշեղ Այլաբերեցին /6-րդ դ./, Մկրտիչ Ա Վանեցին /1903 թ./ և 1989 թ. ապրիլին Վազգեն Ա Պալճյանը՝ ընկերակցությամբ Գարեգին Բ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի (Այժմ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոս):

Այուենեցիները Հայոց Հայրապետներին արժանացրել են հոգևոր այրերին արժանավայել ու պատվաբեր ընդունելության՝ ի նշանավորումն այդ այցելությունների, և նրանց պատվին կանգնեցրել հուշասյուներ, իսկ առանձին պատումներում՝ գրի առել հիշարժան դրվագներ[8]:

---

6 Թաղիադեանց Մ., նշվ., աշխ., էջ 275:

7 Թաղիադեանց Մ., նշվ. աշխ., էջ 275:

8 Այս առումով ուշագրավ է 1989 թ. ապրիլի 26-27-ին Այուենք՝ Սիսիան Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա Պալճյանի և Գարեգին Բ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի այցելության առիթով պատմաբան Հ. Առաքելյանի հրատարակած «Ուխտագնացություն դեպի Սիսիան» (Սիսիան, 1991) գրքույկը: